

<p>Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին</p>		
0.1	Անվանումը	Առևտրային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշներ
0.2	Ոլորտը	Պետական ֆինանսներ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	<p>Արմստատ Ֆինանսների վիճակագրության բաժին Բաժնի պետ Հայկուշ Տիտիգյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 583 049, +374 11 523 904 Ֆաքս՝ +374 11 521 921 Էլ. փոստ՝ haykush@armstat.am, info@armstat.am</p>
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ:</p> <p>Ցուցանիշի հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 90-ական թվականների սկզբից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:</p>
0.5	Օգտագործողները և կիրառումը	<p>Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:</p> <p>Կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կիրառվում է տնտեսության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:</p>
0.6	Տեղեկությունների աղբյուրները	<p>Ցուցանիշի կազմման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով իրավաբանական և անհատ ձեռնարկատերերից տարեկան պարբերականությամբ հավաքվող տեղեկություններն են:</p>

0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>Առևտրային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունը բաղկացած է երկու մասից՝</p> <ol style="list-style-type: none"> 1) կազմակերպության միջոցների կազմը և դրանց գոյացման աղբյուրները, 2) կազմակերպության ֆինանսական արդյունքը: <p>Հաշվետվական ձևում ակտիվները, պարտավորությունները կամ սեփական կապիտալը պահանջվում է ներկայացնել ըստ տնտեսության հատվածների.</p> <p>1.կազմակերպության ակտիվների մնացորդները պետք է ներկայացնել ըստ տնտեսության այն հատվածների, որոնց մոտ առաջանում է ֆինանսական պարտավորություն կամ կապիտալում մասնակցություն, իսկ</p> <p>2.պարտավորությունների մնացորդները՝ ըստ տնտեսության այն հատվածների, որոնց մոտ առաջանում է ֆինանսական ակտիվ:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Հիմնական հասկացություններ</p> <p>Ինստիտուցիոնալ միավորը համարվում է երկրի տնտեսական տարածքի ռեզիդենտ, եթե այդ տարածքում այն ունի գերիշխող տնտեսական շահերի կենտրոն, այսինքն՝ անսահմանափակ կամ երկարատև ժամանակահատվածում (սովորաբար մեկ տարի), իրականացնում կամ միտված է իրականացնելու տնտեսական գործունեություն կամ նշանակալի ծավալով գործառնություններ: Հատվածները ինստիտուցիոնալ միավորների խմբեր են: Յուրաքանչյուր ինստիտուցիոնալ միավոր ընդհանուր առմամբ պետք է վերաբերի այս կամ այն հատվածին:</p> <p>Ոչ առևտրային կազմակերպությունները իրավաբանական անձինք կամ հասարակական կազմակերպություններ են, որոնց ստեղծման հիմնական նպատակը ապրանքների ու ծառայությունների արտադրությունն է, և որոնք դրանց հիմնադիրների, վերահսկող կամ ֆինանսավորող միավորների համար չեն կարող հանդիսանալ եկամտի, շահույթի կամ այլ ֆինանսական օգուտների ստացման</p>

		<p>աղբյուր:</p> <p>Տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններն այն իրավաբանական անձինք են, որոնք հիմնականում զբաղվում են տնային տնտեսությունների համար ոչ շուկայական ծառայությունների արտադրությամբ, որոնք շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդում և ստացված շահույթը մասնակիցների միջև չեն բաշխում: Դրանց կարգավիճակը թույլ չի տալիս այդ կազմակերպությունները ստեղծող միավորների համար լինել եկամտի, շահույթի կամ այլ ֆինանսական շահի աղբյուր:</p> <p>Այդ կազմակերպությունների ռեսուրսները գոյանում են անդամավճարներից, նվիրատվություններից և սեփականությունից ստացվող եկամուտներից: Տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններից են՝ քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, բարեգործական հիմնադրամները, եկեղեցին և կրոնական այլ կազմակերպությունները, պրոֆեսիոնալ և այլ տիպի միությունները, մշակութային կազմակերպությունները, որոշ կրթական և գիտահետազոտական կազմակերպություններ և այլն:</p> <p>Տնային տնտեսություններն անձանց խումբ է, որոնք ապրում են միևնույն կացարանում, միավորում իրենց ողջ (կամ մասնակի) եկամուտն ու ունեցվածքը և կուլեկտիվ սպառում ապրանքների և ծառայությունների որոշակի տեսակներ (հիմնականում՝ բնակարանային ծառայություններ և սննդամթերք): Դրանք գործատուներն են, ինքնազբաղված անձինք, վարձու աշխատողները կամ սեփականությունից և տրանսֆերտներից եկամուտ ստացողները:</p> <p>Ոչ ֆինանսական կազմակերպությունները կամ ընկերություններն ինստիտուցիոնալ միավորներ են, որոնց հիմնական գործունեությունը շուկայական ապրանքների կամ ոչ ֆինանսական ծառայությունների արտադրությունն է:</p> <p>Ֆինանսական կազմակերպությունները այն բոլոր ռեզիդենտ կազմակերպություններն են, որոնք հիմնականում զբաղված են այլ ինստիտուցիոնալ միավորներին ֆինանսական ծառայությունների մատուցմամբ, այդ թվում՝ ապահովագրական ու կենսաթոշակային հիմնադրամների ծառայությունները:</p> <p>Ֆինանսական կազմակերպություններ են. կենտրոնական բանկը, ավանդային կազմակերպությունները, դրամական շուկայի հիմնադրամները, ոչ դրամական շուկայի ներդրումային հիմնադրամները, այլ ֆինանսական միջնորդները, օժանդակ ֆինանսական կազմակերպությունները, փոխկապակցված ֆինանսական հաստատությունները, տոկոսառուները, ապահովագրական կազմակերպությունները և կենսաթոշակային հիմնադրամները:</p> <p>Պետական կառավարման մարմինները քաղաքական</p>
--	--	--

		<p>գործընթացների արդյունքում ձևավորված իրավաբանական անձինք են, որոնք տվյալ տարածքի սահմաններում գտնվող այլ ինստիտուցիոնալ միավորների հետ հարաբերություններում օժտված են օրենսդրական, դատական կամ գործադիր իշխանությամբ:</p> <p>Ներառում է կենտրոնական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև կենտրոնական կառավարության մաս կազմող բոլոր ինստիտուցիոնալ միավորները և կենտրոնական կառավարության կողմից վերահսկվող ոչ շուկայական ՊՈԱԿ-ները:</p> <p>Ճյուղային ընդգրկունություն</p> <p>Վիճակագրական դիտարկումները ներառում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2)՝ գործունեության տեսակները:</p> <p>Աշխարհագրական ընդգրկունություն</p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և Երևան քաղաքը:</p> <p>Հրապարակման խմբավորումներ</p> <p>Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2)՝ բաժիններով:</p>
<p>2. Ժամանակայնություն</p>		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Տարեկան ցուցանիշները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հոկտեմբերին:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան
<p>3. Ճշգրտություն</p>		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Հիմնական տեղեկատվությունը հավաքվում է իրավաբանական անձանցից, ընդ որում՝ միջին և խոշոր առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է 50-ից ավելի մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 մլն դրամը, համատարած կերպով ընդգրկվում են տարեկան պարբերականությամբ վիճակագրական հաշվետվություն ներկայացնողների ցանկում, ինչն ապահովում է ճշգրտության բարձր աստիճան: Մյուս կազմակերպություններից տեղեկատվությունը հավաքվում է</p>

		ընտրանքային կարգով՝ տարեկան պարբերականությամբ: Ընտրանքի իրականացման համար գլխավոր համակցության ձևավորման նպատակով կիրառվում է վիճակագրական բիզնես ռեգիստրը:
3.2	Անճշտության աղբյուրները	Դիտարկման ընթացքում առաջացող անճշտությունների աղբյուր կարող են հանդիսանալ ընտրանքի սխալը, տեղեկություն տրամադրողների կողմից պատասխանների բացակայությունը, բիզնես ռեգիստրում առկա տեղեկատվության անճշտությունները (գործունեության տեսակի ոչ ճիշտ որոշումը կամ դրա փոփոխությունը տարվա ընթացքում) և այլն: Ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունների կողմից տարվա սկզբի մնացորդների վերաբերյալ ներկայացված տվյալների ճշգրտությունը իրականացվում է նախորդ տարվա վերջի մնացորդի տվյալների հետ համադրման միջոցով:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Պատասխանների մակարդակը կազմում է մոտ 98%, ընտրանքի սխալի չափը չի գերազանցում 5%:
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ.-ը ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998-2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄԱԿ): Սկսած 2002թ.- ից ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված Եվրոպական համայնքների վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE հիման վրա):2010թ.- ից կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2- ը: 2010թ.-ից մինչև 2014թ. տեղեկատվություն չի հավաքվել հաշվետվակավ ձևի ուժը կորցրած ճանաչվելու պատճառով:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա չէ :
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Առաջին անգամ հրապարակված տվյալներն որակվում են նախնական: Նախնական տվյալները վերանայվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:
5 .Մատչելիություն		

5.1	Տարածման ձևաչափ	<p>Հրապարակումներ Տարեկան հրապարակումներ «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն): Տվյալների բազա http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6 Ինտերնետային հասցե Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82:</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	<p>Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար. ա/ իրավաբանական անձի նույնականացման ծածկագիրը, (անհատ ձեռնարկատիրոջ համար բացակայում է) բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը, ե/ կազմակերպական-իրավական ձևը, զ/ իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն, է/ գործունեության հիմնական տեսակը, ը/ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից ստացված զուտ հասույթը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի), թ/ աշխատողների միջին ցուցակային թվաքանակը:</p>
5.3	Այլ տեղեկատվություն	<p>Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ ցուցանիշների հաշվարկման առավել մանրամասն տեղեկատվությունը զետեղված է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 30-ի «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 3Ֆ (տարեկան) վիճակագրական ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 77-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ում:</p>
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		<p>Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:</p>